



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

08.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/07

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Շինարար-97» ՍՊԸ-ի 20.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից նյութերը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. «Շինարար-97» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Շինարար-97» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.05.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ա. Գաբրիելյանի անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Շինարար-97» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացած նիստում համապատասխան որոշմամբ «Շինարար-97» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքեր ունենալու հիմնավորմամբ:

Ընկերությունը որպես ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմք ներկայացրել է հետևյալը.

Հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Ընկերությունը նշել է, որ խախտվել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և 3-րդ մասով սահմանված պահանջները:

Ընկերությունը մեջբերել է Օրենքի 5-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2)-րդ կետով սահմանված պահանջը.

«Գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով»,

- 3-րդ մասով սահմանված պահանջը.

«Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:»:

Ընկերությունը մեջբերել է նաև Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասով սահմանված պահանջը.

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»,

- 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջը.

«Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:»:

Ընկերությունը գտնում է, որ որ խախտվել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություններ:

Ընկերությունը որպես ապացույց բողոքին կից ներկայացրել է 2017թ. մայիսի 5-ի դրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից հարկային պարտավորություններ չունենալու մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 2017թ. մայիսի 20-ին տրված թիվ 1223 տեղեկանքը:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոցներ ընթացակարգը կասեցնելու մասին:

2. Դադարեցնել.

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացած նիստում համապատասխան որոշմամբ «Շինարար-97» ՍՊԸ-ին մերժելու մասին որոշումը,

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 31.05.2017թ. թիվ 02/61-30386 հ գրությամբ Խորհրդին է ներկայացրել ԵԲ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Շինարար-97» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով՝ 06.05.2017թ. Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ն 11.05.2017 թվականին տրամադրել է հարցման մասին եզրակացություն, համաձայն որի «Շինարար-97» ՍՊԸ-ն վերոհիշյալ ընթացակարգին

գնային առաջարկ ներկայացնելու՝ 05.05.2017 թվականի դրությամբ, ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 107316.0 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով Խորհրդից խնդրել է, որ «Շինարար-97» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնվի համապատասխան գործընթաց՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Խորհրդի 02.06.2017թ. նիստին մասնակցում էր Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հուրոյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԷՍ-2017/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով) կողմից 2017 թվականի մարտի 21-ի թիվ 2 որոշմամբ հաստատված և հրապարակված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 11.05.2017 թվականին տրամադրած եզրակացությունը:

3. N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2017թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը:

4. Երևանի քաղաքապետարանի 31.05.2017թ. թիվ 02/61-30386 հ գրությունը:

5. Ընկերության կողմից Խորհրդին ներկայացրած ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 2017թ. մայիսի 20-ին տրված թիվ 1223 տեղեկանքը:

6. Խորհրդի նիստերի ընթացքում Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների կողմից արտահայտած կարծիքները և դիրքորոշումները:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը ուսումնասիրել է «Շինարար-97» ՍՊԸ-ի 20.05.2017թ. ներկայացրած բողոքը, N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 31.05.2017թ. թիվ 02/61-30386 հ գրությունը, N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.05.2017թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 11.05.2017 թվականին տրամադրած եզրակացությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 2017թ. մայիսի 20-ին տրված թիվ 1223 տեղեկանքը, Պատվիրատուի ներկայացուցչի ներկայացրած դիրքորոշումը և կարծիքը:

Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ա. Գաբրիելյանի անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.03.2017թ. հայտարարել է N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգ:

«Շինարար-97» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել հայտ:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 15.05.2017թ. թիվ 3 արձանագրությամբ մերժվել է՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

«Շինարար-97» ՍՊԸ-ն բողոքին կից ներկայացրել է 2017թ. մայիսի 5-ի դրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից հարկային պարտավորություններ չունենալու մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 2017թ. մայիսի 20-ին տրված թիվ 1223 տեղեկանքը:

Բողոքի քննության նպատակով 02.06.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտի մերժելը պայմանավորվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 11.05.2017թ. տրամադրած եզրակացությամբ, համաձայն որի «Շինարար-97» ՍՊԸ-ն՝ 05.05.2017 թվականի դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, մինչդեռ գտնում է, որ Ընկերության կողմից Խորհրդին ներկայացրած ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 2017թ. մայիսի 20-ին տրված թիվ 1223 տեղեկանքը հիմք է հանդիսանում Ընկերության կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու համար:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Պատվիրատուն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշում չի հրապարակել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

- 1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 70-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովը, Ընկերության հայտը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 11.05.2017թ. տրամադրած եզրակացության հիման վրա մերժելով՝ գործել է իրավաչափ, սակայն Խորհուրդը հիմք ընդունելով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և Կարգի 70-րդ կետով սահմանված պահանջները, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 2017թ. մայիսի 20-ին տրված թիվ 1223 տեղեկանքը, գտնում է, որ խախտվել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և նույն հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջները:

Խորհուրդը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշում չի հրապարակել, գտնում է, որ «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին ներկայացված բողոքով՝ «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին պահանջն առարկայազուրկ է:

Պատվիրատուն 31.05.2017թ. թիվ 02/61-30386 հ գրությամբ ներկայացված հիմքերով Խորհրդին խնդրել է նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Շինարար-97» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու լիազորությունը վերապահված է լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, թեև Խորհուրդը գտնում է, որ վերոհիշյալ գրությամբ ներկայացված հիմնավորումներով «Շինարար-97» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Շինարար-97» ՍՊԸ-ի 20.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84 ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2017թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 որոշմամբ «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ